



ԵՐԿՈՒՇԱՐԹԻ, 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնս պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Սխոնի՛ որդիք, զարթի՛ք, Հարսին Լուսոյ տո՛ւք աւետիք,
 Էթէ՛ Փեսայն քո յարուցեալ յարթեաց մահու իշխանութեամբ.
 Կայ պսակէ զքեզ փառօք, Է՛լ ընդ առաջ պճնեալ զարդուք,
 Երգեա՛ երգ նոր Յարուցելոյն՝ ննջեցելոց կենաց Պատոյն:

ԱՊՈԹՔ

Օգնէ մեզի, Տէ՛ր, օգնէ մեզի, ով մեր փրկիչ Աստուածը, Քու մեծ անունիդ փառաւորութեան համար: Տէ՛ր, փրկէ մեզ եւ քաւէ մեր մեղ-քերը, Քու սուրբ անունիդ համար: Սուրբ եւ պատուական խաչիդ հովա-նիին տակ պարսպուած եւ խաղաղութեան մէջ պահէ Քեզի ապաւինած եւ Քեզի յուսացող ժողովուրդդ: Փրկէ մեզ տեսանելի եւ անտեսանելի թշնամիներէն: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու Քեզ, Հօրդ եւ Սուրբ Հոգիին հետ միասին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՄ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար փասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 87

ԵՐՈՒՍԱԴԵՄԸ ՄԱՅՐ՝ ԲՈԼՈՐ ԱԶԳԵՐՈՒՆ

Աստուծոյ փաղափին հիմերը սուրբ լեռան վրայ հաստատուած են:

Իր ժողովուրդին բնակութեան բոլոր վայրերէն աւելի՝

Տէրը Սիոն փաղափը կը սիրէ:

Ինչ փառաւոր բաներ կը պատմէ Տէրը քու մասիդ, ով փաղափ Աստուծոյ:

Տէրը կ'ըսէ.- Զիս նանչցող ազգերու կարգին

պիտի յիշատակեմ եգիպտոսն ու Բաբելոնը.

Փղշտիան, Տիրոսն ու Եթովպիան

այս փաղափին փաղափացիները պիտի նկատուին:

Սիռնը մայր պիտի կոչուի բոլոր մարդոց,
որոնք անոր փառափառները պիտի ըլլան,
որովհետեւ Բարձրեալը ինք զայն հիմնադրեց:
Ժողովուրդներու ցուցակին մէջ Տէրը պիտի արձանագրէ.
Այս մէկն ալ այստեղի փառափառի դարձաւ:
Եւ անոնք երգելով ու պարելով պիտի ըսեն.-
Մեր ակումբը բու մէջդ է, ով փառափ Աստուծոյ:

ՕՐՈՒՄՆ ՆԻԺՐ



ՍԱՂՄՈՍ 87

ԵՐՈՒՄԱՂԷՍԸ ՄԱՅՐ՝ ԲՈՒՈՐ ԱԶԳԵՐՈՒՆ

Այնպէս ինչպէս մարգարեական գիրքերու պարագային, երբ կը սերտէինք, քեսանք, թէ նեղութեան, դժուարութեան եւ կամ թէ հալածանքի վիճակին մէջ, Տէրը յոյսի մէկ արքայապարտութիւն մըն է որ կու տայ, որպէսզի չըլլայ թէ Իր ժողովուրդը ամբողջութեամբ յուսահարի, եւ յուսահարութեամբ, հաւաքքը կորսնցնէ: Նոյնը կը գրենք Յայրնութիւն Յովհաննոս գիրքին մէջ, երբ կը ներկայացնէ աշխարհի վիճակին ու վերջին ժամանակներու աղէտները, յանկարծ յոյսի, խաղաղութեան, յաղթանակի արքայապարտութիւն մը, քեսիլք մը կը ներկայացնէ: Նոյնն է պարագան այսօրուան մեր 87 Սաղմոսին, որ իբրեւ այդպիսին կը ներկայացնէ մեզի այսօր, երբ ամենօրեայ նեղութիւնը, անորոշութիւնը, քակաւին չհաշ-ուած մահն ու սարսափը, պատերազմներուն ձայներն ու լուրերը, կու գայ յոյս մը, յոյս մը քալու հաւա-քացեալին, որպէսզի կարենանք այս բարի պատերազմը իր աւարտին հասցնելու, հաւաքքը պահելու, եւ արդարութեան պսակին արժան ըլլալու: Հերաքրքրական Սաղմոս մըն է այսօրուան այս Սաղմոսը, ու մանաւանդ՝ անոր վերնագիրն ու բովանդակութիւնը: Պահ մը հարց կրնանք քալ, ինչու այս վերնագիրը: Նախ ճոռնանք, որ գրողը Երուսաղէմի բնակիչ է, Տաճարին մէջ պաշտօնեայ: Բնական է որ այդ գովքը պիտի ընէ: Սակայն, այնպէս ինչպէս միւս բոլոր Սաղմոսներու պարագային փորձեցինք քեսնել անոր մէջ մարգարեական քուտալը, այսքեղ եւս փորձենք քեսնել: Աղօթենք, որ Աստուծոյ Ինք առաջ-նորդէ մեզ, Ինք քայ իմաստութիւն, որպէսզի միայն բացարարութիւն չունենանք, այլ անկէ մեր հոգեւոր սնունդը առնենք, որպէսզի հոգեւորապէս աճինք ու պարտաք ըլլանք Սիռնի բնակիչ ըլլալու: Քիչ առաջ որ շարականը երգեցինք, Ս. Ներսէս Շնորհալի հայրապետը այդ պատկերացումն է որ քուտա մեզի ներ-կայացնելով Սիռն քաղաքը ոչ միայն Աստուծոյ քաղաք, այլ աւելին Հարսը Փեսային: Ուրեմն, խորքին մէջ այս Սաղմոսը կը վերաքերի Եկեղեցիին, այն Եկեղեցիին որուն հիմնադիրը Բարձրեալը Ինք եղաւ: Եկեղեցի՝ իբրեւ մայր, որուն արգանդին մէջ վերաքին կը ծնին դառնալու համար որդեգիր զաւակներ եւ այդ քաղաքին բնակիչները:

Սկսինք առաջին համարէն: Նախ կը ներկայացնէ որպէս Աստուծոյ քաղաք: Այս արքայապարտ-թիւնը կու գայ նոյնինքն Ծննդոց գիրքէն երբ Աբրահամ պիտի դիմաւորէր Սաղմոսի թագաւորը: Ուրեմն այդ քաղաքը սուրբ լեռան վրայ հաստատուած է: Ընդհանրապէս Աստուծաշնչական իմաստով այդ լեռը զԱստուծոյ կը ներկայացնէ, ըսել կ'ուզէ, որ այդ քաղաքը Իր վրայ հաստատուած է: Քրիստոս առի-թով մը պիտի ըսէր, այս ժայռին վրայ պիտի կառուցեմ Իմ Եկեղեցիս: Աստուծոյ համար ժողովուրդներու բոլոր վայրերէն աւելի Սիռն քաղաքը սիրելի է Իրեն համար: Այդ քաղաքի մասին ինչ փառաւոր բաներ կը պարսմէ Տէրը: Այս քողերը նաեւ պահ մը կը յիշեցնեն, եթէ երբեք կարդացեր ենք Երգ Երգոց գիրքը, երբ կը խօսի Փեսան Հարսի գեղեցկութեան մասին: Տէրը նաեւ կը յիշեցնէ, թէ ուրիշներ ալ պիտի գան, նոյնիսկ անոնք որոնք թշնամիներ էին արեւնօք, քաղաքացիները ըլլալու այս քաղաքին: Որովհետեւ Սիռնը մայր պիտի կոչուի բոլոր անոնց որոնք անոր քաղաքացիները պիտի ըլլան: Ինչպէս մէկը կրնայ քաղաքացի ըլլալ, ըստ քուտալներու երկիրներ կան, որոնք ունին իրենց յարուկ օրէնքները, եթէ այնքեղ ծնիս այդ երկրին քաղաքացին կը դառնաս, երկիրներ՝ եթէ այնքեղ ապրիս որոշ շրջան մը: Իսկ այս պարագային, եթէ հոն ծնիս, որովհետեւ մայրութեան արքայապարտութիւնը կայ: Հերաքրքրականօրէն, կ'աւելցնէ ըսելով Բարձրեալը Ինք հիմնեց: Այդ Քրիստոս Ինք հիմնեց այդ քաղաքը՝ Եկեղեցին: Իսկ ամէն անգամ երբ մէկը քաղաքացի կը դառնայ, Տէրը անոր անունը կ'արձանագրէ: Իսկ քաղաքացիները ինչ կ'ընեն, կ'երգեն, եւ ինչ կ'երգեն. Մեր ակումքը քու մէջդ է, ով քաղաք Աստուծոյ: Ահա թէ ինչ էր Վարդա-նանց լոգուքը երբ պիտի երթային պատերազմի, կ'ըսէին. Քանզի Աւետարանն գիրքնք որպէս Հայր, եւ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ իբրեւ Մայր: Մայրը ծնունդ քուտոլ, իսկ Հայրը դաստիարակող: Վերա-նորոգենք մեր մէջ այս խօսքը, մանաւանդ երբ այսօրուան աշխարհին ամբողջ նպարակը հեռացնել է մարդիկը իրենց ակումքէն, այսինքն՝ Աստուծոյ քաղաքէն: Եթէ հեռացած ենք, վերադառնանք, եթէ հոն ենք՝ ամուր պահենք:

Պահապան ամենայնի Քրիստոս,

աջ բո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,

ի նստիլ ի տան, ի գնալ ի մանապարհ,

ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.

եւ ողորմեա՛ բո արարածոց եւ ինձ քաղմամեղիս: